ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՖԵՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
25.01.2019թ.

Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոններ
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀօրենքի 14-րդհոդված

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքապետարանը հայտարարում է մրցույթ՝ համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.
1)Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետը՝
ա)ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համաատասխան փաստաթղթերը.
բ)աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է ծառայողական բնույթի նյութերի սահմանված կարգով համակարգչային կազմման աշխատանքներ.
գ)պատասխանատվություն է կրում համակարգչային տպագրությամբ համայնքապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար.
դ) ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը
ե)ապահովում է գույքահարկի տեղեկատվական տվյալների՝ շտեմարանի հետ կապված աշխատանքները
զ)իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ և գրություններ.
դ)իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
2.Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝
ա) միջնակարգ կրթություն
բ) Հայաստանի Հանրաետության Սահմանադրության ,<<Համայնքային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Հողի հարկի մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության, իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի իմացություն.
գ) անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում
դ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
Մրցույթը տեղի կունենա 2019թվականի փետրվարի 25-ին ժամը՝ 12: 00-ին, Ֆերիկ համայքապետարանում (հասցեն՝ Կոմիտաս փող.շենք 6)
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
ա) դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքներին աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայականի(ների պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
գ) հայտարարությունայն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետությանկառավարության 2011թ. դեկտեմբերի 15–իթիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
դ) հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե)արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները.
զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),
է) անձնագրի պատճեն
Մրցույթին մասնակցելցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչտեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրերին և հարցաշարերին ծանոթանալուհամար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքապետարան (հասցե՝ հ.Ֆերիկ , Կոմիտաս 6շենք, և ՀՀ Արմավիրի մարզապետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ Աբովյան 71, հեռ. 0237 2 76 49):
Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը9:00-ից 17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջ նաժամկետն է 2019թվականի փետրվարի 11-ը: